ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մարտի 2025թ. **N -----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
2-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1.1-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2025 թվականի մարտի 13-ի N 915-Ա որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևան քաղաքի ավագանու 4-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը (կցվում է):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՕՐԱԿԱՐԳ

1. Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
3. Նունե Թումանյանի հեղինակած «Երեք խնձոր» քանդակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին: (Զեկուցվող)
4. Արմենուհի Հովսեփյանի «Կատարսիս» քանդակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին: (Զեկուցվող)
5. Խորեն Պալյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Զեկուցվող)
6. Կարինե Կարապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Զեկուցվող)
7. Գրիգոր Գուրզադյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Զեկուցվող)
8. Երևան քաղաքի Նաիրի Զարյան փողոցը Կոստան Զարյանի անվամբ անվանափոխելու մասին: (Զեկուցվող)
9. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N259-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)
10. Երևան համայնքի սեփականության 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին: (Զեկուցվող)
11. Գ.Հասրաթյան փողոցի հ.25/11 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Զեկուցվող)
12. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին: (Զեկուցվող)
13. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)
14. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)
15. Գույքի նվիրատվության մասին: (Զեկուցվող)
16. Գույքի նվիրատվության մասին: (Զեկուցվող)
17. Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին: (Զեկուցվող)
18. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Թումանյան փողոց թիվ 8, Հանրապետության փողոց թիվ 83, 83/2, 85 և Սայաթ-Նովա պողոտա թիվ 20/5 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը անհամաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)

19. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Հնդկաստանի փողոց հ.2 հասցեում բազմաֆունկցիոնալ շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
20. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 267-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: (Չզեկուցվող)
21. Աղբահանության վճարի նկատմամբ հաշվարկված տույժերի վճարման պարտականությունից ազատելու մասին: (Չզեկուցվող)
22. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N266-Ն և N267-Ն որոշումների մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
23. Երևանի զարգացման 2024 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին: (Զեկուցվող)
24. Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
25. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 690-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին: (Զեկուցվող)
26. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)
27. Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու և Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին: (Զեկուցվող)